ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«3 »_հունիս_____2021թ.

/ստորագրման ամսաթիվը/

Շուշիի Տեխնոլոգիական Համալսարանի (այսուհետ՝ Համալսարան), ի դեմս ռեկտոր Հովհաննես Վաչեի Թոքմաջյանի ներքո գործող Կանոնադրության, մի կողմից, և ԱՀ «Արևիկ» Մանկական Բուժմիավորման գործադիր տնօրենի Կ.Ս.Մելքումյանի մյուս կողմից գործող Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքել են այս պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրի առարկան Համալսարանի (ռեկտոր Հ.Վ.Թոքմաջյան) և Արցախի Հանրապետության «Արևիկ» Մանկական Բուժմիավորման համագործակցությունն է առողջապահության բնագավառում ուսուցման, մեթոդական և գիտակրթական գործունեության ոլորտում SS և բնագիտական առարկաների ամբիոնի բազայի հիման վրա։

2. Կողմերի պարտականությունները

2.1. Արցախի Հանրապետության «Արեվիկ» Մանկական Բուժմիավորումը պարտավորվում է.

2.1.2. Համալսարանի SS և բնագիտական առարկաների ամբիոնի գիտահետազոտական աշխատանքների համար ապահովել անհրաժեշտ տեղեկատվությամբ։

21.3 Տվյալ պայմանագրի շրջանակներում «Արևիկ» Մանկական Բուժմիավորման մասնագետների գիտական տեղեկատվության և հրատարակումների փոխանակում Համալսարան SS և բնագիտական առարկաներ ամբիոնի հետ։

2.1.4. Համալսարանի SS մասնագետների համար հնարավորություն ընձեռել հրատարակելու իրենց գիտական հետազոտությունների արդյունքները Արցախի Հանրապետության Առողջապահության նախարարության հրատարակություններում։

2.1.5. Համալսարանի հետ փոխանակվել ձեռք բերված ուսումնասիրությունների մասին տեղեկատվությամբ, որ ձեռք է բերվել սույն հուշագրի առարկայի հետ կապված համատեղ

գիտական աշխատանքների միջոցով (դասախոսական դասընթացների ընթերցում, գիտական գրականության փոխանակում, համատեղ գիտական կոնֆերանսներ, ռեպորտաժների հրապարակում)։

2.1.6. Աջակցել բարձր որակավորում ունեցող անձնակազմի (գիտական թեկնածուների եւ բժիշկների) վերապատրաստմանը։

2.2. Համալսարանը պարտավորվում է.

2.2.1. ԱՀ «Արևիկ» Մանկական Բուժմիավորմանը տրամադրել Համալսարանի գիտահետազոտական աշխատանքների տվյալները պայմանագրի շրջանակներում։

2.2.2. Սույն պայմանագրի շրջանակներում Համալսարան SS մասնագետների գիտական տեղեկատվության և հրատարակությունների փոխանակում։

2.2.3. ԱՀ «Արևիկ» Մանկական Բուժմիավորման բժիշկներին հնարավորություն ընձեռնել հրատարակել իրենց գիտական հետազոտությունների արդյունքները համալսարանի հրատարակություններում։

2.2.4.Բժշկական հաստատությունների հետ փոխանակվել ձեռք բերված ուսումնասիրությունների արդյունքների մասին տեղեկատվությամբ, որ ձեռք է բերվել համատեղ գիտական գործունեության միջոցով, սույն պայմանագրի առնչությամբ (դասախոսական դասընթացներ, գիտական գրականության փոխանակում, համատեղ գիտաժողովներ, հոդվածների հրատարակում)։

2.2.5. Համալսարանի կողմից իրականացվող միջազգային ծրագրերին մասնակցելու համար «Արևիկ» Մանկական Բուժմիավորման բժիշկների ներգրավումը օտարերկրյա համալսարանների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ։

2.2.6. Մշակել և ստեղծել ավտոմատացված կառավարման համակարգեր՝ «Արևիկ» Մանկական Բուժմիավորման խնդիրների լուծման համար։

3. Հատուկ պայմաններ

3.1. Կողմերի բոլոր ֆինանսական հարաբերությունները, որոնք կարող են առաջանալ սույն պայմանագրի կատարման ընթացքում, ձևակերպվում են Կողմերի լիազորված ներկայացուցիչների կողմից ստորագրված այս պայմանագրի լրացուցիչ համաձայնագրերով։

4. Պայմանագրի ժամկետը

4.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, 2021թ. և գործում է հինգ տարի մինչև 2026թ.:

5. Այլ պայմաններ

5.1. Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակով՝ հավասար իրավական ուժ ունեցող, յուրաքանչյուր Կողմի համար:

5.2. Եթե սույն պայմանագրի ուժի մեջ մտնելուց մեկ ամիս առաջ Համալսարանը չի հայտարարում ժամկետի երկարաձգման մասին նույն պայմաններով, այդ պայմանագիրը համարվում է դադարեցված:

5.3. Բոլոր մյուս առումներով, որոնք նախատեսված չեն սույն պայմանագրով, Կողմերը առաջնորդվում են ԱՀ-ում գործող օրենսդրությամբ:

6. Կողմերի ստորագրությունները:

ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ	ԱՀ «Արևիկ» Մանկական Բուժմիավորում
375000 ք. Շուշի, Ա.Բեկորի փ., շ. 4	375000 ք.Ստեփանակերտ, Ա.Մկրտչյանի փ., շենք 4ա
ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ	ԱՀ «Արևիկ» Մանկական Բուժմիավորման գործադիր տնօրեն
ռեկտոր	
_____Հովհաննես Վաչեի Թոքմաջյան	**_____Կարեն Սամվելի Մելքումյան**